## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2018 թվականի N 05

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Ռազմիկ | | | |
| 2. Զաքարյան Վաղինակ | | | |
| 3. Թորոսյան Նվեր | | | |
| 4. Հովհաննիսյան Սարգիս | | | |
| 5. Ղանղնոսյան Խաչիկ | | | |
| 6. Պողոսյան Զավեն | | | |

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ / Մ.ՄԿՐՏՉՅԱՆ /

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնքի
ավագանու « 30 » մարտի 2018թ.
N 05 որոշման

1. Օրակարգի հաստատում:

/ Մ.Մկրտչյան -Համայնքի ղեկավար /

2. Ծաղկալանջ համայնքի նորընտիր ավագանու կանոնակարգը հաստատելու մասին:

/ Մ.Մկրտչյան -Համայնքի ղեկավար /

3.Ծաղկալանջ համայնքի 2018թվականի բյուջեն հաստատելու մասին 2017թվականի դեկտեմբերի 15- ի թիվ 26-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

/ Մ.Մկրտչյան -Համայնքի ղեկավար /

4. Ծաղկալանջ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին ֆինանսական օգնություն հատկացնելու մասին:

/ Մ.Մկրտչյան -Համայնքի ղեկավար /

**Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սենիքերիմյան /**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*<< 30 >> մարտի 2018 թ. թիվ 06 - Ն*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով և 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

*Համայնքի ավագանին որոշում է՝*

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

1. Պողոսյան Զավեն ------------------------------------
2. Երվանդյան Ռազմիկ ------------------------------------
3. Թորոսյան Նվեր ------------------------------------
4. Հովհաննիսյան Սարգիս ------------------------------------
5. Ղանդիլոսյան Խաչիկ ------------------------------------
6. *Զաքարյան Վաղինակ* ------------------------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------------ Մկրտչյան

*2018 թվականի մարտի 30, գյուղ Ծաղկալանջ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2018 թվականի N 07 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15 -ի «2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 26-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

2.Բյուջեի եկամտային մասում ավելացնել հողի հարկը 356.0 հազ. դրամով ,տեղական վճարը 796.0 հազ.դրամով և հողի օտարումից եկամուտ հազ.դրամ:

3.Համայնքի բյուջեի ծախսերը ավելացնել բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

01.3.1 հատվածի 4232հոդվածին 100.0 հազ. դրամ,

01.1.1 հատվածի 4213հոդվածին,որպես նախորդ տարիների ապառք 422.0հազ.դրամ,

01.6.1հատվածի 4213 հոդվածին 200.0հազ.դրամ,

01.6.1 հատվածի 5122հոդվածին 285.9հազ.դրամ,

08.2.4հատվածի 4239 հոդվածին, որպես նախորդ տարիների ապառք 350.0հազ. դրամ,

09.1.1հատվածի 4637 հոդվածին, որպես նախորդ տարիների ապառք 80.0հազ. դրամ :

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ՝ | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Ռազմիկ | [signature] | | |
| 2. Զաքարյան Վաղինակ | [signature] | | |
| 3. Թորոսյան Նվեր | [signature] | | |
| 4. Հովհաննիսյան Սարգիս | [signature] | | |
| 5. Ղանդևոսյան Խաչիկ | [signature] | | |
| 6. Պողոսյան Զավեն | [signature] | | |

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.ՄԿՐՏՉՅԱՆ /

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնք, 4-րդ փողոց N9

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2018 թվականի N 08

## ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանին

որոշում է՝

1. Ծաղկալանջ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին ֆինանսական օգնություն հատկացնել՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Ռազմիկ | | | |
| 2. Զաքարյան Վաղինակ | | | |
| 3. Թորոսյան Նվեր | | | |
| 4. Հովհաննիսյան Սարգիս | | | |
| 5. Ղանդևոսյան Խաչիկ | | | |
| 6. Պողոսյան Զավեն | | | |

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ /Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջ համայնքի
ավագանու < 30 > մարտի 2018թ.
N - 08 որոշման

**ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՑՈՒՑԱԿ**

1. Երիցյան Մարուս - 40.000 դրամ
2. Սամսոնյան Մարիամ - 40.000 դրամ
3. Սարգսյան Ժաննետա - 40.000 դրամ
4. Կարապետյան Սոֆիկ - 40.000 դրամ
5. Մկրտչյան Հռիփսիմե - 40.000 դրամ
6. Ներսիսյան Գայանե - 40.000 դրամ

**Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սենիքերիմյան /**